

**Առողջապահության ոլորտում անցած մեկ տարի յոթ ամսվա ընթացքում
իրականացված ռազմավարական ծրագրեր և կատարված այլ աշխատանքներ**

Ա. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱՑԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

1. ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ՝ 3 ՓՈՒԼՈՎ

Նպատակը՝

- ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում,
- մարդակենտրոն մոտեցում,
- ծառայությունների որակի վերահսկողություն:

1-ին փուլ՝

- 2017 թվականի հոկտեմբերի 1-ից ներդրվել է սոցիալաթերի շուրջ 100,000 շահառուի բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը պետության կողմից ձեռք բերված առողջապահական ապահովագրական փաթեթի շրջանակներում: Արդյունքում շահառուները սպասարկվում են իրենց կողմից ընտրված կազմակերպություններում առանց հերթագրումների:
- 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 1-ը ծրագրի շրջանակում տրամադրվել է 54,703 բժշկական ծառայություն (1 մլրդ 697 մլն ՀՀ դրամ արժողությամբ, վիրաբուժական ծառայությունների կշիռն ավելացել է 32%-ով):

2-րդ փուլ՝

- Սոցիալաթերի շահառուների ծրագրի դրույթների իրականացման արդյունքների վերլուծությամբ նախապատրաստվել է բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ավելի քան 612,000 բնակչության բժշկական սպասարկումը նույն մեխանիզմով:

3-րդ փուլ՝

- Բնակչության բժշկական պարտադիր ապահովագրության ներդրման հայեցակարգը մշակվում է:

2. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Նպատակը՝

- պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործում:

- Մշակվել են բժշկական կազմակերպությունների կողմից ձեռք բերվող դեղերի և բժշկական նշանակության ապրանքների կենտրոնացման փուլային մեխանիզմներ:
- Մշակվել է առաջնային օղակում լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ դեղերի հատկացման նպատակով առողջապահության նախարարության կողմից դեղերի առավելագույն գներ սահմանելու մեխանիզմ՝ հիմք ընդունելով միջինացված ցուցանիշը:

Արդյունքում պետական բյուջեի միջոցների մինչև 24% տնտեսում:

- Հիվանդանոցային օղակում դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերումը առաջարկվել է իրականացնել կենտրոնացված կարգով:
- Բարեփոխման առաջին փուլում ընդգրկվել է սրտի անոթների վիրահատության «Stent for Life» ծառայությունը: Գնման ընթացակարգերն ամփոփված են: Ծրագրի արդյունքում նախատեսվում է **պետական միջոցների մինչև 35% տնտեսում:**
- Պատվաստանյութերը, հակառետրովիրուսային և հակատուբերկուլոզային դեղերը ձեռք են բերվում մրցակցային ձևով՝ բաց մրցույթներին մասնակցում են նաև միջազգային ընկերությունները:
- 2017 թվականի համար պետական միջոցներից կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի համար տրամադրված գումարից **տնտեսվել է շուրջ 156 մլն ՀՀ դրամ:**

3. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ

Նպատակը՝

– պետական բյուջեի միջոցների, տարածքների, վարչատնտեսական անձնակազմի և մահճակալների արդյունավետ օգտագործում:

- Օպտիմալացվել է Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի կառուցվածքը:
- Երևանում միավորվել է 2 հոգեբուժարան:
- ՀՀ ԱՆ ենթակայության 1 ՊՈԱԿ և 1 ՓԲԸ միավորվել են ՀՀ ԱՆ այլ կառույցների,
- 2 ՓԲԸ լուծարվել է:
- Կատարվել է ՀՀ աշխատակազմի և ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալության կառուցվածքի փոփոխություն:
- Արդյունքում **խնայվել է 1,8 մլրդ ՀՀ դրամ, ազատվել՝ 40.000 քմ տարածք:**

Բ. ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿ

4. ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ, ՊԱՅԻԵՆՏԻ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Նպատակը՝

- Բուժման ելքերի և բուժսպասարկման որակի ապահովում, որի արդյունքում
 - 1) որակի չափանիշների սահմանում,
 - 2) ապացուցողական բժշկության գերակայության, բժշկական նույնական ծառայությունների ապահովում,
 - 3) բժշկի պաշտպանվածության ապահովում:
- Նախատեսվել է 5 տարվա ընթացքում ունենալ 1,150 կլինիկական ուղեցույց, պացիենտի վարման գործելակարգ և ընթացակարգ կամ տարեկան՝ 200 փաստաթուղթ:
- 2017 թվականին միջազգային լավագույն փորձի հիման վրա թարգմանվել և տեղայնացվել է 320 կլինիկական ուղեցույց, պացիենտի վարման գործելակարգ և ընթացակարգ: Դրանց մեծ մասը թվայնացվում է:
- 2018 թվականին սահմանված 200-ից ավելի քան 40-ն արդեն իսկ պատրաստ է:

5. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Նպատակը՝

- Ազգային լաբորատոր համակարգի ձևավորում և զարգացում, որի արդյունքում
 - 1) հանրային առողջապահական և կլինիկական լաբորատոր ծառայությունների կանոնակարգում միջազգային ժամանակակից մոտեցումներով,
 - 2) որակի արտաքին գնահատման ծրագրերի ներդրում,
 - 3) ռեֆերենս լաբորատորիաների ինստիտուտի ձևավորում:
- 2017-2018 թվականներին Միջազգային փորձագետի խորհրդատվությամբ և համագործակցությամբ, ստեղծված մասնագիտական խմբի կողմից իրականացվել է ազգային լաբորատոր համակարգի գնահատում:
- Մինչև 2019 թվականը նույն համագործակցությամբ կձևավորվի միջազգային առողջապահական կանոններին համահունչ համընդհանուր լաբորատոր ցանց,

- 2018-2019 թվականներին կներդրվեն լաբորատոր որակի կառավարման և կենսանվտանգության համակարգեր, լաբորատոր հետազոտությունների որակի արտաքին գնահատման ծրագրեր՝ կույր-թեստերի միջոցով,
- Կխթանվի միջազգային լաբորատոր համագործակցությունը,
- Գործող լաբորատորիաները տարին մեկ անգամ միջազգային հավաստագրում կանցնեն:

6. ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

Նպատակը՝

- Դեղերի օգտագործման վտանգների և վնասակար ազդեցության նվազեցում:
 - Հակամանրէային դեղերի անկանոն օգտագործման արդյունքում առաջացած կայունության հետևանքով մահացության նվազեցում:
 - Կեղծ և ժամկետանց դեղերի ներկրման և սպառման կանխում:
 - Արատավոր երևույթների ի դեմս դեղերի նշանակման համար դրամական պարզևատրման պրակտիկայի կանխում:
- «Դեղերի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության 13 որոշման նախագիծ, որից 6-ն ընդունվել է:
 - «Դեղերի մասին» ՀՀ օրենքից բխող դեղերի բաց թողնման կարգի հիմքում դեղատոմսում դեղի հիմնական ազդող քիմիական նյութի նշումն է, որպեսզի հիվանդը կաշկանդված չլինի ըստ իր գրպանի ընտրություն կատարելու գործում:
 - Նոր կարգը միտված է կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը:
 - Վերահսկողություն կսահմանվի դեղերի, հատկապես՝ հակաբիոտիկների օգտագործման նկատմամբ:
 - Շաքարային դիաբետ ունեցող երեխաների բուժման արդյունավետությունը բարձրացնելու, դիաբետի հետագա բարդությունները կանխարգելելու նպատակով 2017 թվականին ձեռք է բերվել երկարատև ազդեցության ինսուլինային անալոգ Գլարգին դեղը:
 - 2017 թվականին հաստատվել է Դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային (PIC/S) անդամակցությանն ուղղված ծրագիրը: Դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմային անդամակցումը կտա մի շարք հնարավորություններ, այդ թվում՝ Հայաստանի դեղարտադրողների կողմից արտադրանքի ազատ արտահանման խոչընդոտների նվազում:
 - 2018 թվականի ընթացքում կներդրվի էլեկտրոնային դեղատոմսը:

Արդյունքում

Հայաստանը կունենա միջազգային արդի պահանջներին համապատասխան լաբորատոր համակարգ:

Գ. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

7. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Նպատակը՝

- անհատի առողջական վիճակի ամբողջական և ճշգրիտ վիճակագրություն՝ սկսած ծննդյան օրվանից,
- բժշկական և առողջապահական բոլոր գործողությունների հաշվառման միջոցով կառավարչական որոշումների հնարավորություն:

Համակարգի ամբողջական ներդրումը կհանգեցնի՝

- ծրագրային ապահովմամբ ախտորոշման,
 - ոչ անհրաժեշտ դեղերի նշանակման կրճատման,
 - առանց թղթաբանության բժշկության,
 - բժշկական սխալի նվազեցման:
- 2017 թվականին համակարգն ինտեգրվել է բնակչության ազգային ռեգիստրին: Ստեղծվել է բժիշկ-մասնագետների և բժշկական կազմակերպությունների ռեգիստր:
 - 2017 թվականի մայիսից պետական պատվերով իրականացվող և սոցիալական փաթեթի շահառուներին մատուցվող բժշկական ծառայությունների վճարումներն իրականացվում են էլեկտրոնային առողջապահության համակարգ ներբեռնված տվյալների համաձայն:
 - Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կրթական ծրագրերում ներդրվել է էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրման և կլինիկական ուղեցույցների, պացիենտի վարման գործելակարգերի և ընթացակարգերի մշակման ուսուցում:
 - 2018 թվականին համակարգն ինտեգրվել է շտապ օգնության էլեկտրոնային համակարգին:
 - Մշակվել են ուսումնական նյութեր առողջապահական համակարգի բոլոր օգտագործողների համար անվճար դասընթացներ կազմակերպելու նպատակով:

- 2018 թվականին նախատեսվում է շուրջ 2,000 համակարգչի ձեռք բերում, 15,000 բուժաշխատողի ուսուցման մեկնարկ:

8. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՂԱԿԻ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄ

Նպատակը՝

- Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում առողջապահական ծառայությունների արդյունավետության և մատչելիության բարձրացում,
 - Առաջնային օղակի բժիշկների հեղինակության և պատասխանատվության բարձրացում,
 - առկա միջոցներով ավելի մեծ արդյունքների ապահովում,
 - բժիշկների աշխատավարձի ձևավորման նոր մեխանիզմի ներդրում:
- Մշակվել է Առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխման հայեցակարգ, համաձայն որի՝
 - 1) ԱԱՊ բժիշկը կցագրված 2,000 բնակիչ սպասարկելու դեպքում կվարձատրվի ոչ պակաս 250 հազար դրամ, գումարած ևս նույնքան վաստակելու հնարավորություն՝ ստացված բոնուսների հաշվին:
 - 2) Ֆիքսված աշխատավարձը կձևավորվի կցագրված բնակչության կանխարգելիչ գնումներով (100% ընդգրկվածությամբ) և դիսպանսեր հսկողությամբ:
 - 3) Բոնուսները կձևավորվեն չափելի արդյունքներով
 - սպասարկվող բնակչության շրջանում հիվանդությունների կանխարգելում,
 - պատվաստումների ընդգրկվածության, ինչպես նաև ուռուցքային, սրտանոթային և թոքերի օբստրուկտիվ հիվանդությունների վաղ հայտնաբերման ցուցանիշներ,
 - ուռուցքային հիվանդությունների I-ին և II-րդ փուլերում հայտնաբերում,
 - թերապևտիկ հիվանդների 70-75% դեպքերում առաջնային օղակում բուժում,
 - բուժման օպտիմալ արժեքի և տևողության ապահովում:
 - Մինչև 2018 թվականի ավարտը ԱԱՊ համակարգի բժիշկները կաշխատեն ամբողջովին էլեկտրոնային առողջապահության համակարգով,
 - Լիովին կներդրվեն ԱԱՊ օղակի կլինիկական ուղեցույցները և ընթացակարգերը,
 - Թերապևտիկ հիվանդների 75%-ի բուժումը կկազմակերպվի տնային պայմաններում կամ առաջնային օղակի ցերեկային ստացիոնարում,

- Հոգեկան առողջության և պալիատիվ բժշկության գործառույթները կտեղափոխվեն ԱԱՊ օղակ:
- Նախատեսվում է ԱԱՊ օղակում տուբերկուլոզի կանխարգելման, ախտորոշման և բուժման ծառայությունների ամրապնդում և զարգացում:

9. ՀԵՊԱՏԻՏ Ց-ՈՎ 1,000 ՀԻՎԱՆԴԻ ԲՈՒԺՈՒՄ

- Վրաստանի կառավարության կողմից նվիրաբերված Սովալդի դեղով մեր երկրում իրականացվել է հեպատիտ Ց-ով 1,000 հիվանդի բուժման աննախադեպ ծրագիր: Արդյունքները գոհացնող են:

10. ԿԱՏԱՐԱԿՏԻ ԱՆՎՃԱՐ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

- Մշակվել և ներդրվել է «Առողջ աչքեր» ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է 2017 թվականից տարեկան կատարել կատարկոտի անվճար (ներառյալ ոսպնյակի արժեքը) հավելյալ 3,000 վիրահատություն:

11. ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

- Չինաստանի կառավարության հետ կնքված պայմանագրի շրջանակում 2018 թվականին Հայաստանին կտրամադրվի շտապօգնության 200 մեքենա, այդ թվում՝ ութանիմոբիլներ:
- 2017 թվականին ձեռք է բերվել շտապ բուժօգնության 10 մեքենա՝ հագեցված շտապ և անհետաձգելի բժշկական օգնության համար նախատեսված ժամանակակից սարքավորումներով ու պարագաներով, այդ թվում՝ շարժական արհեստական շնչառության սարքավորում և դեֆիբրիլատոր: Լեռնային բնակավայրերի համար նախատեսված մեքենաները սեփականության իրավունքով տրամադրվել են Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի և Լոռու մարզերի բժշկական կենտրոններին: